

պէր նախապատուութիւն տալ լատին կամ յոյն ձեւերուն<sup>3</sup> :

Հռոմէական հաստատութեանց մասին ճանաչող գրքերուն մէջ կը հանդիպինք հիմնական եւ աւանդական սա սահմանադրումն ընելու սովորութեան՝ Դիոկղետիանոսէ յառաջ եւ Դիոկղետիանոսէ յետոյ : Ես հրատարեցայ նիւթերու այսպիսի ընդհանուր բաժանում մ'ընելէն : Ասորոց աշխարհին մէջ իրենք այսպէս պարզ չեն . փոխանակ բարեջրութեան կէտերուն՝ հոն միայն մանրամասնական եղանակաւորումներ կատարուած են՝ որոնք յառաջ կու գային պարագաներէն, որոնք աւելի զօրաւոր էին քան թէ կայսերաց բարեփոխական գաղափարները : Իւրաքանչիւր գլխու մէջ նշանակուած են ժամանակագրական զանազանութիւնները, եւ պիտի տեսնուի թէ նիւթին համեմատ՝ կարելի չէ զանոնք պէսպէս փոփոխել :

Այս դիտողութեանս առանձինն կարեւորութիւն մը կու տամ այն ամէն բանի նկատմամբ որ բանակին զօրացոյցներուն հետ կապ ունի : Անշուշտ չենք կրնար ուրանալ մեծ բարեփոխութեան այն նշանաւոր օգուտը, որ Դ. դարուն սկիզբը պաշտօնական եղաւ եւ որ պահեստի բանակը կը բաժնէր սահմանագիւղաներուն զնդերէն : Բայց այս բարեփոխութիւնն արդէն պատրաստուած էր նախընթաց դարուն եւ իրականին նաեւ մասամբ ի զլուխ հանուած էր : Ուստի մեր ուսումնասիրութեան մէջ բոլորովին բացառօրէն իշխելու չէ նոյնը<sup>4</sup> : Ասկէ կանուխ է լեզուններու մանրացումը, ինչպէս նաեւ հեծելազօրու (equites) զնդերու ծագումը . եւ ոչինչ կ'արժէ հոս օտարացեղ տարերաց գեղակչութեան մէջ, եւ առանց աղղեցութեան մնացած է հին օժանդակ (auxilia) զօրաց վաշտերու (cohortes) եւ քեւերու (alae, աւազբ) բնութեան եւ կազմութեան նկատմամբ, եւ ես հարկաւոր համարեցայ այս պէսպէս զնդերու տեսականութիւնը ցուցընել, որոնք այնպէս երկայն ժամանակ պա-

<sup>3</sup> Կ'աւելցնենք թէ յաճախ խօսքին պարզութեան կամ նաեւ պէսպիսութեան համար չենք զգուշացած՝ Բիւզանդեան շրջանի հեղինակաց պէս՝ գործածել Հռոմայեցիք կամ Հռոմէք բացատրութիւնը, նշանակելու համար Բիւզանդիոյ ինքնակալաց հպարտները : Ասի այն առաւելութիւնն ունի որ՝ այսպէս բացատրելէն ետքը՝ կը պատշաճի թէ՛ Վերին (Հռոմէական) եւ թէ՛ Ստորին (Բիւզանդեան) կայսրութեան :

<sup>4</sup> Սասանեանց ամբաստան՝ իւր ունեցած հետեւութեամբքն՝ այս պատմութեան մէջ շատ աւելի վճահական վարկեան մը կ'երեւայ ինձի . բայց ասի ինքն իրեն ընդհանուր գոհացուցիչ բաժանում մը չէ ընծայեցընել :

հուած են իրենց բանակատեղիներու մէջ : Զուտ զինուորական տեսակետով դուքսը (dux) ըստ բաւականին կը յիշեցնէ նահանգի նախարար (legatus provinciae), եւ վերջապէս զօրաց մագիստրիանոսը (magister militum, Զօրավար զօրաց)՝ որ Պարսկական պատերազմին կ'առաջնորդէր դասակազօրաց (comitatenses) կամ պալատական օժանդակազօրաց (auxilia palatina) ա'յնպէս չէր տարբերեր Գ. դարու զօրացեալէ մը, որ՝ ըլլա'ր կետար կամ հիւպատոս՝ միեւնոյն նպատակաւ իւր գլխաւոր զօրութիւնները կ'առնուր Դանուբի լեզէններէն : Վերջապէս Դ. դարու զինուորական կազմակերպութիւնը տակաւին կը պահէ հնոյն հետ իւր կապերը, որոնք յետոյ ի հարկէ պիտի տկարանային, եթէ ոչ խզուէին : Վասն զի Յուստինիանու ժամանակ, որչափ որ կրնանք այս մասին դատաստան մ'ընել, զօրակարգական բոլոր միութիւնները կ'երեւայ թէ ձուլուած են քուոյ (numerus) այնպիսի ընդարձակ ու այնպէս պարզ գաղափարին մէջ, որ այնուհետեւ միակ բացատրութիւն մըն է, որ կը նշանակէր իրարմէ բոլորովին տարբեր խմբերն ալ : Այս անժխտելի խտանակութեան մէջ փորձած եմ ժամանակագրական կարեւորագոյն բաժանումները պահել եւ չզրհել որ եւ է հակասութիւն մ'որ մտադրութեան արժանի էր :

Ինձի կ'երեւայ թէ ժամանակի այս բաժանումներն իւրաքանչիւր գլխու մէջ տակաւին աւելի դիւրաւ ընդունելի են ա'յն գլխոյ մէջ, որոնք շատ տկար զարգացումներ կը ցուցընեն, որովհետեւ ճշգրիտ ու մանրամասն տեղեկութիւններ կը պակասին . այլեւայլ նիւթերու մասին միայն էլի կամ կէս էլի ատաղձ ունեցած եմ սոջեւ . զասոնք բաժնելու պէտք մը չկար : Ասի ըրած ատենս՝ աչքի առջեւ ունիմ գլխաւորաբար այն գլուխը, որուն խորագիրն է՝ Բանակին վարչական եւ օրինական կառավարութիւնը, որուն մէջ շատ մը թիրոյթներ պիտի նշմարուին . զօրաց քաղաքային վիճակին, խնայողութեան արկղներուն եւ զինուորական վարժարանաց մասին բան մը չունինք ըսելու՝ որ Արեւելքի յատուկ կամ անկէ ծանօթ ըլլար : Զարմանալի պիտի երեւայ նոյնպէս որ նոյն խորագրին ներքեւ զօրահանութեան վերաբերեալ տեղեկութիւնները չեն գտնուիր : Հասուն խորհրդով կը ընդհանրէ ետքը՝ գերագուս համարեցայ զասոնք հիւսել զօրաց զնդերու նկարա-

զրութեան մէջ, եւ կը յուսամ որ ա'յն տպաւորութիւնն ազգած եմ թէ այս երկու գաղափարաց մէջ շատ անձուկ աղերս մը կայ :

Ամէնէն աւելի ես կը ցաւիմ որ մեր թերակատար տեղեկութեան պատճառաւ գիրքս Հատրնալիք հնդրոց (quaestiones selectae) ժողովածոյքի մը անյօղ երեւոյթ մ'առած է . սակայն պատմութիւնն ալ արձանագրութեան հնարիւրութեան կը նմանի . աւելի կ'արժէ վաւերական ծայրատեալ արձան մը քան թէ վերանորոգեալ գործ մը՝ կամայական յաւելուածոյ մասերով :

Քանի մը խօսք ալ հեղինակաց հրատարակութեանց մասին, որոնք ամէնէն աւելի բազմաթիւ կոչմանց մէջ յիշատակուած են :

Պղինիոս յիշուած է զրոց ու հատուածներու այն թուերով, որ նշանակուած են լուսանցքի վրայ Jan-Mayhoffի հրատարակութեան մէջ . նոյն ոճով՝ Յովսեպոս ալ (հրատարակ. Niese) : Պողոմեայ համար գործածած եմ հրատարակութիւնը զոր հոգացած են Müller-Fischer : Իսկ Պրոկոպեայ մասին՝ «Վասն Պարզմ. Պրս.» եւ «Ծածուկ Պոմ.» գրքերը կոչուած կ'ընեն Henryի հրատարակութեան համեմատ (գիրք, գլուխ, հատած) . բայց «Վասն Շինութեանց» տակաւին ըլլա տեսած չըլլալով Teubnerի զրավաճառանոցէն, կը գործածեմ Բոնն (Bonn) քաղաքի հրատարակութիւնը : Թէոփանէսի եւ Թէոփիլակտոսի Սիմոնաստայի համար՝ Բուրի (Boor) հրատարակութիւնը (գիրք, գլուխ, հատած) : Զաքարիա Հոնտորի համար՝ Ահրենսի եւ Կրիզտօրի գերմ. թարգմանութիւնը (Zacharias Rhetor, Die sogenannte Kirchengeschichte, in deutscher Übersetzung hrsg. von G. Ahrens u. G. Krüger, Leipzig 1899) : Իսկ աշխարհագրական յուշարարաց մասին՝ Անտոնինեայ Ուղեգրութիւնը կոչուած եղած է Վեսելինգի (Wesseling) թուարկութեան համաձայն, Ռաւէննայի աշխարհագրութիւնն եւ Հերոկլէսի Ուղեկցութիւնը (συνηθηρια) Partheyի թուարկութեանց համեմատ :

Յուլիանու համար ընդունած եմ Շպանհայմի (Spanheim) գլխաւորաբար բաժանումները՝ զորոնք Հէրտլայն (Hertlein) ալ պահած է :

Ինքնին կը հասկըցուի թէ «Պաւլի-Վ.» կը նշանակէ Պաւլի-Վեստլայի Հանրագիտարանը (Realencyclopädie, von Paul y - Wissensowa) : Դիւրաւ կը ճանչցուին դարձեալ

սովորական գործածուած համառոտութիւնները, ինչպէս՝ CIL (Հաւաքածոյ Լատինական արձանագրութեանց), CIG (Հաւաքածոյ Յունական արձանագրութեանց), BCH (Տեղեկագիր Հելլենական թղթակցութեան) IGRRT (= Inscriptiones Graecae ad res Romanos pertinentes, Յունական արձանագրութիւնք Հռոմէական իրաց վերաբերեալ), եւ նմաններ :

(Շարունակելի) : Զ. Յ. ՏԱՇԵԱՆ

**ՅՈՒՑՈՎ ՀՍԵՆՔԻՆ ԶԵՌԵԳՐԸՑ Ի ԲՈՒԼԳՐԻԸ**  
1.  
**Մ Ա Շ Տ Ո Ց**  
Ի Պ Լ Ո Վ Դ Ի Ի

ԹՈՒՂԹՔ՝ 147: — ՄԵՏՈՒԹԻՒՆ 13.5 X 10: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին՝ 11 X 7: — ՏՈՂՔ՝ 21: — ԹԵՐԹՔ՝ նշանակուած են 12, իւրաքանչիւրը 8 քուրք, սակայն կանոնաւոր չեն քերքերը (ե ունի 10, 2՝ 7, 1՝ 31, 1՝ 13, 1՝ 22, 1՝ 7): — ՆԻՒԹ՝ մագաղաք մասամբ հաստ, մասամբ բարակ: — ԿԱՉՄ՝ փայտեայ կաշեպատ, փակելու մարք համուած եւ մասամբ փայտաւոր: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆՍԿ՝ աղջիկ երկու, կոնքի հատ մը, այն ալ կտրուտուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ոչ լաւ, ընդհանրապէս փայտաւոր. ք. 16, 24, 25, 49, 68, 82, 83, 103, 120, 147 պատուած. տեղտեղ մագաղաքեայ քարիկներով նորոգուած. ք. 1—2 իրենց տեղայն չեն վերաքերքը. ամբողջ քարեր կտրուած համուած են, այսպէս՝ ք. 55—56ի միջեւ երեք քուրք, ք. 91—92ի միջեւ երկու քուրք, ք. 94—95ի միջեւ երեք քուրք, ք. 118—119ի միջեւ երկու քուրք. իսկ ք. 104—105ի միջեւ քուրք ինկած է: — ԳԻՐ՝ բոլորգիր կանոնաւոր, տեղտեղ մաշած, քանոնաւոր եւ դժուարընթեղի դարձած. ք. 8րդ օտար ձեռքի կրկին գրուած. ք. 55րդ՝ ֆերուած, անընթեղի դարձած. նոյնը նաեւ ք. 94ա: — ԶԱՐԿԱԳԻՐՔ՝ ամեն կանոնի սկիզբը միագոյն կամ երկգոյն (ք. 3ա, 21ա, 32ա, 34ա քոչնագիր, ոչ շատ յաջող): — ԽՈՐԱԳԻՐՔ՝ եւ սկզբնաւոր կարճագիր. գլխաւոր հատուածոց սկզբնաւոր մանուշակ: — ԽՈՐԱՆ՝ ք. 3ա երկգոյն (ոչ շատ յաջող), մեշտեղ սեղուած արուած մատիտով: — ԿԻՍԱՆ՝ ԽՈՐԱՆ՝ ք. 56ա մանուշակագոյն: — ԼՈՒՍԱՆՑԱՉԱՂՐԻՔ՝ մեծ եւ միագոյն (մուքամուշակագոյն, ք. 3ա երկգոյն) ամեն հատուածոց սկիզբը, այսպէս ք. 3ա, 21ա, 32ա, 34ա, 39ա եւն. ք. 133ա քոչնագրով: — ՆԿԱՐՔ՝ չկան: — ԳՍԱՍԿ՝ ք. 1ա, 2բ: — ԺԱՄԱՆԱԿ՝ յիշատակարանի իյնալովը անյայտ, իբր ժձ—ժէ դար: — ԳՐԻԶ՝ ԾԱՂԱՊՈՂ՝ ՏԵՐ ԵՒ ՏԵՂ ամծանօք այժմ: — ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒՄ

ԹԻԻՆՔ չկան այժմ (հաւանորէն կորուած քրքե-  
րուն վրայ կը գտնուէին): — Տե՛ղե՛ն ՌԻՊԻՆԻՆՔ՝ Զե-  
նագրիս այժմեան ստացիւն է Պրովիւարիալ Տիկիւն  
Մարիանէ Ս. Գասպարեան, որ ստացած է իր հոր-  
մէն՝ Յարութիւն Նահապետեանէ, Անդրիանուպոլ-  
սեցի:

Մատենան է Մաշտոց: Թղ. 1բ կը բո-  
վանդակէ Թաղման կանոնէն աղօթք մը:  
Թղ. 2ա «Պատճառ հոգէհանգիստ ասնւոյ՝  
եւ ի ճանապարհին կարդան դ. աւետարանս  
ի խորհուրդս երից ժամանակաց. մանկու-  
թեան, երիտասարդութեան եւ ծերութեան»  
եւն, հաւանորէն երկուքն ալ ուրիշ ձեռքէ  
գրուած:

1. Թղ. 3ա: Կը սկսի «Կանոն մկրտու-  
թեան: Ածեն զնուիրեալն ի դուռն եկեղեց-  
ւոյն եւ ասն Սաղմոս ի թիւ. Տէր ոչ բար-  
ձրացաւ զփոխն ի բուն դ. հեա եւ միոյ միոյ  
փառս տան Աստուծոյ եւ քահանայիցն եւ  
մանեն զընարաւտն (այսպէս): Եւ ասն զա-  
ղաւթս. Տէր Աստուած մեր Աստուած բարե-  
բերար: Վերջ՝ Թղ. 18ա<sup>1</sup>:

Այս կանոնին մէջ կայ հրահանգ երախայի  
հազորութեան (մկրտելէն յետոյ) Թղ. 16ա<sup>2</sup>.  
«Եւ հաղորդեցուցեալ ի սուրբ խորհուրդոյն եւ ու-  
ղարկեն մինչեւ ի դուռն եկեղեցւոյն» եւն. Թղ.  
17ա<sup>2</sup>. «Եւ ութ աւր յեկեղեցւոյն կացցէ սպիտակ  
փակեղամբ զղլուխն ծածկեալ ունիցի... ամե-  
նայն աւուր հաղորդելով ի մարմնոյ եւ արեան  
Տեան: Եւ ապա յաւուրն ութերորդի վերացու-  
ցանէ քահանայն զթաղն. եւ ասէ զաղաւթս զայս.  
Որք մկրտեցան եւ լուսաւորեցան» եւն:

2. Թղ. 18ա<sup>2</sup>. «Կանոն ութաւրեա տղային.  
բերեն զերեկայն ի դուռն եկեղեցւոյն, եւ  
խնդրեն անուն ի քահանայէն, եւ քահանայն  
ասէ զաղաւթս զայս ի վերայ տղային, եւ  
մանն բերէ զտղայն եւ ոչ մայր. Տէր Աստուած  
մեր աղաչեմք զբեղ նշանեացի լոյս երեսաց  
բոց ի վերայ ծառայիս քո այս անուն» եւն  
(1 էջ):

3. Թղ. 18բ<sup>2</sup>. «Իսկ յորժամ քառասնաւր  
լինի տղայն զան եկեղեցին մայրն եւ մանկա-  
բարձն եւ մանուկն, եւ հրամայէ քահանայն  
մաւր մանկանն յս. ծունր կրկնել առ զբան  
եկեղեցին (այսպէս), եւ ապա ի վերայ ման-  
կանն ասէ զաղաւթս. Տէր Աստուած մեր որ  
եկիր ի փրկութիւն ազգի մարդկան, նայեաց  
ի վերայ աղախնոյս քո» եւն:

4. Թղ. 20բ<sup>2</sup>. «Կանոն Պսակ աննւոյ:  
Սղմ. ի. Կցորդ Տէր ի զարուսթեան քուժ  
ուրախ. Ընթ. ի Ծննդոց. Եւ ասաց Աստուած  
արասցուք մարդ եւն: (Թղ. 24ա) Քահանայն  
ասէ զաղաւթս. Տէր Աստուած զարութեանց  
արու եւ էգ արարեր» եւն: Թղ. 27ա<sup>2</sup> «Եւ  
ապա թագ կապէ եւ խաչ արկանէ. Սղմ. ի  
թիւ. Երանի ամենեցուն, որ երկնչին» եւն:  
Վերջ՝ Թղ. 31բ<sup>1</sup>:

5. Թղ. 31բ<sup>2</sup> «Կանոն երկրորդ ամուս-  
նութեան պսակի. Սղմ. Տէր ի զարութեան  
քում. Պաղոս գրած է յառաջն. Կանայք  
իւրեանց արանց. Ալէլուիա Կացցէ զչիտոյ բնդ  
աջմէ քում. Աւետարանն՝ Եւ զնային զհեա

Յիսուսի. քարոզ՝ Վասն ուղղելոյ զընացս, եւ  
ասէ զաղաւթս զայս. Տէր Աստուած մեր որ ի  
հրեշտակաց խաւսեցեալ բանդ» եւն: Վերջ՝  
Թղ. 33բ<sup>1</sup>:

6. Թղ. 33բ<sup>2</sup>. «Կանոն հաղորդ տալոյ:  
Անու քահանայն զերկական խորհուրդն եւ  
խաչ առաջի եւ բուրվառ եւ մոմեղէն... եւ  
ասէ զաղաւթս զայս. Տէր Աստուած ամենա-  
կալ, ամենագութ» եւն:

7. Թղ. 38բ<sup>2</sup>. «Կանոն տղաթաղի: Յոր-  
ժամ երկրտասան կամ հնդէտասանմեայ  
լինի՝ ասն Սղմ. Ծ. Ողորմեա ինձ... եւ ասէ  
զաղաւթս զայս. Աստուած յաւիտենական»  
եւն: Վերջ աղայաթաղի՝ Թղ. 52բ:

Այս մասին մէջ Եսայիայ մարգարէութենէն  
ընթերցուած է մը յետոյ կցուած է (Թղ. 48բ)  
«Ի վարդապետութենէ սրբոյն Գրիգորի Լուսա-  
ւորչին: Ամենեքեան՝ որք տեսանցեն զնոս»  
Վերջ՝ «բաց յայնժամ զէմ յանդիման տեսանեմք,  
եւ ի նոյն պատկեր նորոգիմք փառաս. ի փառս»:

8. Թղ. 52բ<sup>2</sup>. «Իսկ առաւաւտուն երթան  
ի զերեզմանն, եւ ասն զամբիժքն, եւ զկնի  
շարական՝ զոր կամին. — Սղմ. Կց. Եղիցի  
անուն տեանն աւրհնեալ. — Փոխն՝ Աւրհնե-  
ցէք մանկունք զՏէր. Ընթ. յեսայեա եւն  
(Թղ. 54ա<sup>2</sup>). Եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ  
եւ բարեխնամող» եւն: Վերջ՝ Թղ. 55բ<sup>1</sup>:

9. Թղ. 55բ<sup>2</sup>. «Կանոն համարէն ամե-  
նայն ննջեցելոց թաղմամբ ի Քրիստոս յար-  
կելով, ասն Սղմ. Ծ. Ողորմեա ինձ Աս-  
տուած, եւ զերկինք պատմեն... Եւ ասէ  
զաղաւթս. Աստուած...»:

Հոս քերուած ջնջուած է կէս էջի չափ. կը  
կարդացուի միայն զարդադիր համառօտագրու-  
թիւնը Աստուած բառին, որուն զիմացի լուսան-  
ցաղարկն ալ մնացած է. այս էջէն յետոյ կորուած  
է նաեւ երեք թուղթ, որով Թղ. 55բ<sup>2</sup> կանոնին  
շարունակութիւնը կ'ըլլայ Թղ. 56ա, որուն վարի  
լուսանցքին վրայ գրուած է «Սղմ. ննջեցելոց»  
եւ կը սկսի «Ալէլուիայ ալ. երկինք պատմեն  
զփառս Աստուծոյ, եւ զարարածն ձեռաց նորա»  
եւն: Վերջ կանոնիս՝ Թղ. 99ա<sup>1</sup>:

10. Թղ. 99ա<sup>2</sup>. «Իսկ առաւաւտուն եր-  
թան ի զերեզմանն, եւ ասն Չամբիժսն...  
Պաղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցոց  
Թղթոյն ընթերցուած» եւն: (Թղ. 100բ)  
«Աղաւթք զոր ասացեալ է տեանն Բարսիլի  
Հայրապետին. Գոհանամք զբէն Տէր» եւն:  
Վերջ՝ Թղ. 104բ<sup>1</sup>:

11. Թղ. 104բ<sup>2</sup>. «Կանոն հոգէհանգիստ  
աննւոյ կամ պատարազ մեռելոց: Ասն աղ.  
ի թիւ ԼԱ. Երանի ուժ. Եւ փառս տան ԼԶ.  
Մի նախանձիր ԼԷ. Տէր մի սրտմտու. Խ.  
Երանի որ խորհի...»:

Այստեղ կ'ընդհատի շարունակութիւնը՝  
թուղթ ինկած ըլլալով: Թղ. 105ա կը սկսի  
«... միայն եւ ասանց մեղաց եւ արքայութիւն  
քո արքայութիւն յաւիտենից որ ոչ անցանէ եւ  
բնդ վայելէ փ.» (անշուշտ աղօթքի մը վերջաւո-  
րութիւնն է, որուն կը կցուի) «Երանի ուժ թո-  
ղութիւն եղեւ մեղաց եւ ծածկեցան ամենայն  
յանցանք նորա» եւն աղաչխարութեան սաղմոսը  
եւ յաջորդները: Վերջ՝ Թղ. 124ա<sup>1</sup>:

12. Թղ. 124ա<sup>2</sup>. «Կանոն տեսնականի  
աղ աւրհնելոյ: Ածեն զնուիրեալն ի դուռն  
եկեղեցոյն առաջի սուրբ խաչին, եւ զնեն  
կարմիր բուրդ եւ բամբակ մի ակամա այլ  
կամա. Եւ ասն Սղմ. ԼԱ. Երանի ուժ թո-  
ղութիւն... Եւ ասն զաղաւթս. Աւրհնեալ  
եւ Տէր ամենակալ ողորմութեամբ քով,  
եւն: Վերջ՝ Թղ. 133ա<sup>1</sup>:

13. Թղ. 133ա<sup>1</sup>. «Կանոն տեսնականի  
սեղան աւրհնելոյ. Աւրհնեալ եւ Տէր Աս-  
տուած ամենակալ», եւն: Վերջ՝ Թղ. 133բ<sup>1</sup>:

14. Թղ. 133բ<sup>2</sup>: «Կանոն ննջեցելոցն  
եաթն աւուրն է կամ Ժե. Եւնաց կամ տարէ-  
կանջ քո, ի խորոց. Ընթերցուած յերե-  
միայն եւն: (Թղ. 135բ<sup>2</sup>) Եւ ասէ զաղաւթս.  
Աւրհնեալ եւ միածին որդի...» եւն: Վերջ՝  
Թղ. 137ա<sup>1</sup>:

15. Թղ. 137ա<sup>2</sup>: «Գանձ թաղման նըն-  
ջեցելոց հաւասար ի յԱռաքել վարդապետէ.  
Այսաւր եհաս հրաման Արարչին...»: Վերջ՝  
Թղ. 139ա<sup>1</sup> (կազմելով անաղուիս «Առաքել  
վարդապետի»):

16. Թղ. 139ա<sup>2</sup>: «Ողբ վասն ննջեցելոց.  
Ով քահանայք եւ վարդապետք...»: Վերջ՝  
Թղ. 141ա<sup>1</sup>:

17. Թղ. 141ա<sup>2</sup>: «Ողբ ննջեցելոց: Եկայք  
այսաւր եղբայրք ամէն», Վերջ՝ Թղ. 142ա<sup>2</sup>  
(կազմելով անաղուիս «Երգ Արիտակեսի»):  
Թղ. 142բ<sup>1</sup>—145բ<sup>2</sup> կրկնութիւն է Թղ.  
133բ<sup>2</sup>—137ա<sup>1</sup>ի բնէ մ'աւելի մանր գրով:  
Թղ. 146ա—147բ<sup>1</sup> ննջեցելոց շարական  
իսկ Թղ. 146ա—147բ<sup>1</sup> ննջեցելոց շարական  
է. կը սկսի «Արարիչ եւ մարդասէր անու-  
ն. կը բարեկոյտ» եւն եւ կը վերջանայ՝  
«Եւ սրբոյն Լուսաւորչին Հայրապետին եւ  
«Եւ սրբոյն Լուսաւորչին Հայրապետին մարտիրո-  
սացն. ողորմած»:

Պիղիղի:

Հ. Ե. ՊՕՂՈՍՅԱՆ

2.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն  
Ի Տ Ո Պ Ր Ի Զ

ԹՈՒՂԹՔ՝ 304: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20½×15×6:  
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, 13½×9: — ՏՈՂՔ՝ խռակ՝  
21—23: — ԹԻՐՔ՝ 24: Համարանիշերը փոխան Ա—  
Ի՛ քննարկուի՝ նշանակուած են Ա—Ո: Իւրաքանչիւրը  
Ի՛ քննարկուի՝ նշանակուած են Ա—Ո: Իւրաքանչիւրը  
12 բուրգ, միայն Ա ունի 17, Է՛ 11 բուրգ: —  
ՆԻԹ՝ բուրգ պինդ եւ ուղղակի, տեղ տեղ աւելի  
կաստ: — ԿԱՉՄ՝ փայտեայ կիմ կաշեկազմ, որուն  
վրայի զարդարանքէն կը մնան այժմ միայն կետերը  
գոկուած վառարկէն արծաթեայ խաչերու: — ՄԱ—  
ԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ միայն վերջաւորութեան  
2 կաստ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանուր առմամբ լաւ:  
Միայն նկարներն (թղ. 6բ, 140բ) ու խորաններն (թղ.  
7ա, 141ա), ինչպէս նաեւ գրութեան մաս մը քեր-  
ուրէն վնասուած խոնարհութիւն: Թղ. 149—160 եւ  
243—302 փայտաւոր են երկաթեայ: — ԳԻՐ՝ բոլոր-

գիր, ոչ միօրինակ, ինչ որ տեղ տեղ նոյն գրչէն չըլ-  
լաւ կասկածը կրնայ ներշնչել: — ՍԿՁԲՆԱԳԻՐՔ՝  
ընդհանրապէս մարդագիր ու բաշմագիր, սովորական  
գործեր, մեծ մասամբ կարմրագոյն: — ԽՈՐԱՆՔ՝ 4.  
աւետարաններու սկիզբը՝ (թղ. 7ա, 85ա, 141ա,  
232ա): Բաւական յաջող. երկգոյն կարմիր եւ կա-  
պոյտ: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ չունի: — ԼՈՒՍԱՆՅԱՍ-  
ՉԱՐՔ՝ բաւականաչափ, ընդհանրապէս հասարակ  
աշխատութիւններ, բաց ի մի քանիներէ: — ՆԳՐՔ՝  
4 աւետարաններու սկզբնաւորութեան հանդիպակաց  
(թղ. 6բ, 84բ, 140բ, 231բ) եւ կը ներկայացնեն չորս  
աւետարանիչներն առանձին առանձին: Բաւական յա-  
զոյակ, բազմագոյն: — ԳԱՍԱՐԿ՝ թղ. 1—3, 140ա,  
231ա, 301ա, 303—304: — ԺԱՄԱՆԱԿ՝ Ռձ եւ ուր:  
(= 1659): — ՏԵՂԻ՝ Չիլայ, ի դուռն Ս. Յակոբայ:  
— ԳՐԻԶ՝ Պետրոս գրիք: — ՏԷՐ եւ ԾԱՂԱՅՈՂ՝ ան-  
յայտ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ թղ. 82, 297ա,  
298—299, 300, 301—302ա, 302բ, 83բ—84ա: —  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ՝ Տոպրիչի Ս. Յովնանէս Աւետա-  
րանից եկեղեցւոյն:

Մատենան է Աւետարան, ուր կան՝

- 1. Թղ. 4—6ա. Թերագրութիւն Ս. Աւե-  
տարանին որ ըստ Մատթէոսի:
- 2. Թղ. 7ա—82ա. Մատթէոս:
- 3. Թղ. 82բ—83ա. Յուցակ գլխոց Ս.  
Աւետարանին Մարկոսի:
- 4. Թղ. 85ա—137բ. Մարկոս:
- 5. Թղ. 137բ—139բ. Յուցակ Աւետարա-  
նին Ղուկասու:
- 6. Թղ. 141ա—229ա. Ղուկաս:
- 7. Թղ. 229բ—230բ. Յուցակը գլխաւորը  
Ս. Աւետարանին Յովհաննու:
- 8. Թղ. 232ա—296բ. Յովհաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ 1. Թղ. 82ա (բուն  
գրչէն). «Աստուած ազանից անձանց մեր դատու բաց  
հարց եւ եղբայրք եւ որդեկաց: Դատարարս այլելու  
(այսպէս թղ. 82բ) նուստս ողի. հողս եւ մոխիրս,  
Պետրոս զբլիք, գրող սորա: Տերամք Աստուծով ա-  
զանձ զպատահալոց սորա, եւ որք շահիք ինչ ի  
սմանէ եւ արիւնակէք, յիշեցէք սրտի մտաւք զմեզ  
մերայովքն թողութիւն եւ փրկութիւն հանգիստ  
եւ ողորմութիւն. այժմ եւ յապագայն գտանել բնա-  
ւիցս ի Քրիստոս Աստուծոյ, եւ զձեզ եւս յիշեցէքս  
Աստուած մի յարիւնակելոյ արդեցէ ոք, զի յոյժ է  
ուղիղ»:

2. Թղ. 297ա. (գլխաւոր յիշատակարանը՝ բուն  
գրչէն). «Փառք անեղ բանին Աստուծոյ... զրեցաւ  
Սուրբ Աւետարանս թվին Ռձ եւ ութին (= 1659),  
ի զերգաբաղաքն Չիլայ, ի դուռն Սուրբ Յակոբայ:  
Արգ աղանձ սուրբ հանդիպողք տեսութեամբ կար-  
գալով կամ արիւնակելով յիշեցէք ի մարտապայ-  
ստան զպիտոս քո անուամբս եւ կոչեցեալ ի զործովս  
անուն զպիտոս քո անուամբս եւ կոչեցեալ եւ զործովս  
եւ հեռացեալ. դարձեալ յիշեցէք ի յաղաթս ձեր  
գծնաւորս իմ զՏէր Խաչատուր քահանայն եւ զմայրն իմ  
զԵղեղեցիկն երէցկին. եւ զեղբայրն իմ զՄատնեսի  
վարդապետն որ առ Աստուած փոխեալ է ձեր յիւ-  
զացս ողորմեցի եւ մեզ հար մեր որ»:

3. Թղ. 298ա—300բ (տարբեր գրչէն). «Աստուած  
ողորմի կնկանար Յակոբին Աստուած լուսաւորէ իւր

